

ղաջարների օրոք, երբ նրանք նորից անցան կենտրոնական կառավարութեանը, դավթարներում արձանագրվեցին որպես «խալիսեններ». այդպիսով, գործածությունից դուրս եկավ «դիվանի» տերմինը և պետական հողերը այնուհետև սկսեցին կոչվել «խալիսե»:

\* \* \*

Արևելագետ Վ. Մինորսկին վկայակոչելով Բարտոլդին, հաստատում է նրա այն միտքը, որ իսլամական Արևելքի քաղաքական ողջ սիստեմում, սկզբից մինչև վերջ մի կարմիր թել կարծես թե ամբողջ վարչական գործերը բաժանում է երկու մասի՝ ա) արքունի դուռը (արքունիքն ու պալատը), բ) «դիվանը» (կամ դաֆթարը): Ֆինանսական տերմինով արտահայտվող «եկամուտները» («վջուհ») ըստ պատկանելության երկու անվանում ունեին «մալ-եխասսե» և «մալ-ե մասալեհ»: Մոնղոլական տիրապետության շրջանում ևս պետական վարչատնտեսական ապարատը երկու մասի էր բաժանվում «ինջու», որ նշանակում էր «արքունի» և «բեդուն» կամ «դելեյ», որ նշանակում էր «պետական գանձարան»: Խոջա Նասիր-էդ-դին Քուսին հարկերի մասին կատարած իր նշումներում ընդգծում է «մալ-ե խասսեյի» և «մալ-ե մասալեհ-ե փաղեշահի»-ի միջև եղած տարբերությունը: Սեֆյան շրջանի «խասսե» կամ «խասսե-յե շարիֆեն» փաստորեն մոնղոլական շրջանի «ինջուն» էր, որը սակայն ավելի բարդ և կատարելագործված տեսք ուներ<sup>28</sup>: Շարդենը նույնպես ամբողջ երկրի հողերը բաժանում է երկու խմբի. պետական, որը նա անվանում է «մոկուֆատ» (mokoufat) կամ «մեմալիք» (memalec) և արքունի՝ «խասսե» (kasseh), որ թարգմանում է «սեփականություն» (propriété)<sup>29</sup>:

Սեֆյան Իրանում թագավորական խասսին պատկանող հողերը բավական ընդարձակ էին և ընդգրկում էին հարուստ և բարձր բերքատվություն ունեցող շրջաններ (Մազանդարան, Գիլան, Լենքորան, Շիրվան, Արաղ և այլն): Շահը երկրի ամենախոշոր կալվածատերն էր: Նա ուներ թե՛ գյուղատնտեսական և թե՛ արհեստագործական խոշոր տնտեսություններ, որոնց արտադրանքը արտահանվում էր կամ վաճառվում ներքին շուկայում: Արքունիքին կից կար մի բավական խոշոր վարչատնտեսական հաստատություն, որ կոչվում էր «սրբազան խասսի կառավարչություն» (սարքար-ե խասսե-յե շարիֆե)<sup>30</sup>: Վարչական այս ապարատի մեջ ընդգրկված էին բազմաթիվ մեծ և փոքր պաշտոնյաներ «դուլամներ» և «մուլաղիմներ», որոնք սակայն իրենց ոռճիկները ստանում էին պետական դրամարկղից<sup>31</sup>: Շահը ուներ նաև իր առևտրական գործակալները, որոնք կոչվում էին «խասսե-յե շարիֆեի վաճառականներ» (թաշեր-ե խասսե-յե շարիֆե)<sup>32</sup>: Այս հսկայական հաստատությունը՝ կենտրոնում և երկրի բոլոր ծայրերում գտնվող խասսի կալվածներում և այլ արտադրա-

<sup>28</sup> Sk' u V. Minorsky, Tadhkirat al-Muluk, a manual of Safavid administration London, 1943, էջ 24—25:

<sup>29</sup> Sk' u Chardin, Voyages du Chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, Paris, 1811, t. VI, էջ 33:

<sup>30</sup> Sk' u Scherefnameh ou Histoire des Kourdes, par Scheref prince de Bidlis 1860, t. II էջ 220 (պարսկ. բնագիր): Հմմտ. تاریخ عالم آرای عباسی : I, էջ 223, Ծայան Եղծոյ, էջ 24, 26:

<sup>31</sup> Sk' u Ծայան Եղծոյ, էջ 8, 18, 24, 34, 46:

<sup>32</sup> Sk' u تاریخ عالم آرای عباسی, جلد دوم ص. 7-7